

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Քարեկան գինը 10 րուբլի. կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են խմբագրատան մէջ.

Եւր Կոպէկ. Тифлис, редакция «Мелк».
Կամ Tiflis, Redaction «Mischak».
Տէլէֆոն № 253.

Թարգմանութիւնը բաց է առաջատար 10—2 ժամ
(ցածի կէրտէի և առն օրերից).

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լիզովով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրատան տնօրէնին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութեան վարչութիւնը սրանով յայտնում է ընկերութեան թղթակից

Յովհաննէս Կարապետեան Ծանուարարեալի

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ հոկտեմբերի 22-ին Յովհաննէս Կարապետեանի կողմէն Միջաշխարհային հիւանդանոցի մատուցած գէշ բժշկական օգնութեան (Միջաշխարհային հիւանդանոցի) շնորհաբարձի, հոկտեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 10¹/₂-ին: Ընկերութեան գրասենեակն այս օրը փակ կը լինի մինչև 11¹/₂ ժամը:

1—1

Բարձրագոյն Մանիֆէստ.

Բարձրագոյն Մանիֆէստ. Ի՞նչ է կատարուած. Վերջին տեղեկութիւնները. — Ներքին Տնտեսութիւն. Հայ պատգամաւորութիւնը Փոխարքայի մօտ. Հոկտեմբերի 22-ին Թիֆլիսում սպանւածների և վերադարձների ցուցակը. — Հեռագրութիւններ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԵՍՏ

Ողորմութեամբ մտաւ մեզ մեծ, Նիկոլայ Ներսիսեան, Գալստի և Ինքնակալ Համայն Ռուսաստանի, թագաւոր Լեւոնտանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն և այլն և այլն, յայտարարում ենք բոլոր Մեր հաւատարմի հպատակներին: Շփոթները և յուզմունքները մայրաքաղաքներում և հայրենիքում շատ տեղերում մեծ վշտով համակում են Մեր սիրտը: Ռուսաստանի թագաւորի բարօրութիւնը անխափելի կերպով կապւած է ժողովրդի բարօրութեան հետ, և ժողովրդի վիշտը — Նրա վիշտն է: Այժմ ծագած յուզմունքներից կարող է լինել ժողովրդական խոր անբարեկարգութիւն և սպառնալիք Մեր պետութեան ամբողջութեանը և միութեանը: Արքայական ծառայութեան Մեծ ուխտը հրամայում է Մեր Մեր բանակային թիւնքի և իշխանութեան ամբողջ ուժով ձգտել շուտօրէն զարգացնելու պետութեան համապատասխան վարչակարգի շինութիւնը: Հրամայելով պատշաճաւոր իշխանութիւններին միջոցներ ձեռք առնել վերացնելու անկարգութիւնները, ապօրինութիւնները և բռնութիւնները անմիջապէս արտաքսելու իշխանութիւնները ի պաշտպանութիւն խաղաղ մարդկանց, որոնք ձգտում են հանդարտօրէն կատարել իւրաքանչիւրի վրա դրւած պարտքը, Մենք անհրաժեշտ համարեցինք, աշխույժեամբ ի կատար ածելու համար պետական կեանքի խաղաղացման Մեր ծրագրած ընդհանուր միջոցները, միութեան հաստատելու բարձրագոյն կառավարութեան գործունէութեան մէջ: Կառավարութեան վրա Մենք պարտաւորութիւն ենք գնում կատարել Մեր անդրդուելի կամքը. 1) Շնորհիւ ազգաբնակչութեանը՝ քաղաքացիական ազատութեան անխախտ հիմունքներ անձի իսկական անձեռնմխելիութեան, խղճի, խօսքի, ժողովրդի և ընկերակցութիւնների ազատութեան հիմունքներով: 2) Զը դադարեցնելով նախօրէն նշանակւած ընտրութիւնները Պետական Դումայի համար, այժմէն իսկ հրաւիրելու ամենակցութեան Դումայի մէջ՝ հնարաւորութեան այն շախիւ, որ համապատասխանում է մինչև Դումայի հրաւիրման ժամանակամիջոցի սղութեան, ազգաբնակչութեան այն դասակարգերը, որոնք այժմ իսպառ զրկւած են ընտրողական իրաւունքներից, թողնելով պատկանելի ընդհանուր ընտրական իրաւունքի ապագայ զարգացումը նոր հաստատւած օրէնսդրական կարգին: 3) Սահմանել, որպէս անխախտելի կանոն, որ ոչ մի օրէնք չը կարողանայ ոյժ ստանալ առանց Պետական Դումայի հաւանութեան և որ ժողովրդի ընտրական իրաւունքով լինի Մեղաւոր նշանակւած

ված իշխանութիւնների օրինաւոր գործունէութեան վրա հսկելու մէջ իրական ժամանակացութիւն ունենալու հնարաւորութիւնը: Հրաւիրում ենք Ռուսաստանի բոլոր հաւատարմի գաւառներին յիշել իրանց պարտքը դէպի հայրենիքը, օգնել զարգացնելու այս անուր շփոթը և մեզ հետ միասին լարել բոլոր ոյժերը վերականգնելու խաղաղութիւնը և հանգիստը հայրենի երկրում: Տուած է Պետերհոֆում հոկտեմբերի 17-ին և Քրիստոսի ծննդեան 1905 թւին, իսկ Մեր թագաւորութեան 11-րորդ տարին:» Իսկականի վրա Նորին Կայսերութեան Մեծութեան ձեռքով ստորագրած է Նիկոլայ:

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

Այս տան օրվայ ընթացքում, որ չէր հրատարակւում «Մշակ» լրագիրը, տեղական թերթերը պետութեան և թէ՛ մասնաւորապէս Կովկասի մէջ լուսաւոր և տխուր երևոյթներ՝ շատ խոշոր իրանք բնաւորութեամբ և այն հետեւանքներով, որ նրանք կարգիւնաբերեն ապագայի համար:

Կայսերական մանիֆէստով յայտարարւեց, որ տրվում է խօսքի և խղճի ազատութիւն, անձի անձեռնմխելիութիւն, ժողովրդի աւելի ընդարձակ մասնակցութիւն պետական գումարում, քան մինչև այժմ ծրագրւած էր և իրականացնելու պիտի կարգ, որ առանց Պետական Դումայի չը հրատարակվի ոչ մի օրէնք:

Մանիֆէստը մենք առանձին հրատարակեցինք և բաժանեցինք թիֆլիսի մեր բաժանարարներին: Գաւառներ աշուղեց ուղարկել միայն այն տեղերը, ուր գոյութիւն ունէր հարողակցութիւն:

Անկասկած, մանիֆէստը ցնծութիւն պատճառեց ամեն տեղ և ժողովրդական խաւերի զանազան համախմբումներ տօնական հանդէսներով անցան փողոցներով թէ՛ մայրաքաղաքներում և թէ՛ ուրիշ քաղաքներում, նրանց թուով և թիֆլիսում: Այդ համախմբումներից մի քանիսը միայն գոհութիւն էին յայտնում տեղի ունեցած առանձնաշնորհումների համար, միւսները խօսում էին այն գործունէութեան մասին, որ լոյս չէր տեսնում ժողովրդի տարել է իր յաղթանակը, երրորդները ճառում էին այն նոր նաւաւորումների մասին, որ դեռ պէտք է անէ հասարակութիւնը ապագայում:

Դժբաղդաբար միայն ճառերով, խօսքերով և աղաղակներով չը վերջացաւ ամեն բան: Թիֆլիսում և Բագուում տեղի ունեցան արեւմտեան ընդհարումներ, որոնք լուրջ կերպով խորհել մեր գործերի և նոր ցաւերի և վշտերի պատճառ դարձան մեր երկրում: Թիֆլիսում մի քանի տասնեակ զոհեր սուղի փոխարկեցին ուրախութիւնը, Բագուում սկսվել են հրդեհներ և տեղի են ունեցել կոտորածներ, որոնց մասին գաղափար կը ստանան ընթերցողները «Մշակի» ներկայ համարում զետեղւած տեղեկութիւններից:

Մենք ցաւ ենք զգում, որ այդպիսի տխուր հանգամանքների մէջ ենք ստիպւած աւետել մեր ընթերցողներին, որ

կովկասեան, նրա մէջ և հայ մամուլը մեր միւս դժբաղդութիւնները միայն աղաւթելը գործնութիւնից և որ այժմ մեր լրագիրները պէտք է լոյս տեսնեն առանց կրելու «թաղաւորված է ցենզուրայից» բառերը:

Մամուլի ազատութիւն — դա մեր տարեկան շարունակ փայլալից տեսլանքն է եղել և մենք այսօր տեսնում ենք նրան իրականութիւն ստացած:

Մամուլը ոյժ է, գաղափարական և հասարակական մեծ ոյժ, բայց նա, անկասկած, այն կարող է անել, ինչ որ մի ազգի, մի ժողովրդի ուղեղը, տաղանդը և իմաստութիւնը կարող են տալ: Ահա այստեղ սկսվում է մի հոյակապ, բայց և դժուար և պատասխանատու գործ, որի իրականացման համար ազատ է ասուելու հասարակութեան այն բոլոր ոյժերի համար, որոնք ունեն մտքերի պաշարներ, կորով և եռանդ իրանց իդէալները մարմնացնելու կեանքի մէջ:

Դուք գիտէք, սակայն, որ մամուլը ունի իր թշնամիները, որոնք պատրաստ են ամեն մի չարիք վերագրել մամուլին: Մասնաւոր մեր երկրում, ուր դեռ նոր են մարդիկ ընտելանում հրապարակական լրագրատեսիլեան, միշտ պատրաստ են եղել հաւատ ընծայել չարամիտների տաւաճած լուրերին թէ՛ մամուլն է արտադրել այս կամ այն անախորժ և տխուր երևոյթ կեանքի մէջ: Նոյն բանաբանութիւնը մենք լսել ենք հայ մամուլի մասին թուրք հայկական ընդհարումների վերաբերութեամբ: Բայց ահա մեր առջև տեղի ունեցան նորագոյն փաստեր, որոնք հանգէս եկան մամուլի լուրեան օրերում: Տան օր առաջ մենք կարծում էինք թէ Բագուում այն ևս հանդիսարան չը պէտք է լինի այն դժոխային տեսարանների, որոնք այնքան ծանր օրեր բերին մեր գլխին: Բայց իրականութիւնը ուրիշ բան է ցոյց տալիս:

Զարմանալի գուգադիպութիւններ: Օգոստոսի սկզբին, երբ մենք հայերս ստացանք միջկարգական լուրեր բոլոր հայ դպրոցների և եկեղեցական կառուածների մասին — մենք հազիւ տրամադրվեցինք սոսկելու մեր կուլտուրական կեանքի նուաճումներից մէկը, մեր առաջ դրին օգոստոսի 29-ի այն արհաւիրքը, որ հրդէհի և աւերի մատնեց Բագուի նաւթաշրջանը, տալով անթիւ անմեղ զոհեր:

Այժմ խօսքի, խղճի ազատութեան, անձի անձեռնմխելիութեան աւետարներ լուրերի միջոցաւ մեզ գուժում են Բագուի նոր հրդէհները, Շուշու նոր սպանութիւնների և ուրիշ ընդհարումների մասին:

Գործող ազգ ենք մենք: Նրբ գալիս է մի աղէտ, առաջին զոհերի շաքերը մենք ենք լցնում: Երբ ազատութեան աղաղակներ են հնչվում ամեն տեղ, դարձեալ մենք գոհվում ենք մէջ ենք, չը ջապատւած հրդէհի, կոտորածների բաժանել լուրերի միջոցաւ:

Բայց միթէ չը կայ մեզ համար միութարութիւն, չը կայ յոյս աւելի լաւ օրերի համար:

Մենք մտադիր չենք զուր միութարութիւններ մտալ: Մենք պարտաւոր ենք լուրջ կերպով խորհել մեր գործերի և դիրքի մասին և խուսափել այնպիսի սխալ քայլերից, որոնք աւելի ու աւելի ծանրացնում են մեր վիճակը:

Իսկ եթէ հարկաւոր է ներկայ օրերում ներշնչել մի յոյս — այդ մեր կողմից այն կը լինի, որ հաւատարմ թէ՛ աւետարմ և ազատարար հոսանքների առաջնադասութեամբ կը թուլանայ խաւարը և կը ողնչանան այն երևոյթները, որոնք ծնունդ են խաւարի և չար ոգու: Իսկ թուրք-հայկական ընդհարումները և

մեր միւս դժբաղդութիւնները միայն խաւարի թելադրութեան արդիւնքն են:

ՎԵՐՁԻՆ ՏՆՆԵՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագուից հեռագրում են մեզ հոկտեմբերի 21-ին 2 ժ. 30 ր. ցերեկվայ:

«Երէկ հայրենասիրական կուսակցութիւնը թուրքերի և զօրքերի հետ միասին ընթանում էր: Սկզբում Տօրգօվայա փողոցի վրա մի ոմն կրակեց, տեղի ունեցաւ սարսափելի իրադանցում: Ամբոխը լուր տարածեց, թէ հայերը ուռւմը դնեցին: Սաղաթէլեանի տան վրա թնդանթներ էին արձակում: Փողոցներում սպանում են հայերին, և կողոպտում են: Խուլիգանները ուռւնքից և թուրքերից բաղկացած, սպանում են քաղաքանդ անել հայերի տները, և բոլորին հրացանի առնել: Ոստիկանութիւնը, պրօֆօկատօրական նպատակով, տեղեկութիւններ է հաւաքում թէ որքան հայեր կան բնակարաններում: Այս րօպէիս հրդեհեցին Միրզաբէկեանի տունը Նիկօլայեվսկայա փողոցի վրա: Հրդեհաշէջներին մօտ չը թողին: Զօրքերը անգործ նալում են: Սարսափելի կոտորած է սպասվում:

Հոկտեմբերի 22-ին.

«Հոկտեմբերի 20-ին ուռւս մե-հարկւրեանայից թուրք խուլիգանները հետ միասին միջոցներ գործել ստանալու թեան առիթով ցոյց անողների դէմ, առանց զիմարդութեան հանդիպելու: Երէկվայ պատահած Նիկօլայեվսկի և Կրդբիշէնսկի փողոցներում հետեւեան է հրդեհվել և կողոպտվել են Միրզաբէկեանի և ուրիշների տները, թուով աւելի քան 15. Կողոպտված են Պետրոսեանի, Առաքէլեանի, Արզումանի և ուրիշների մաղաղիւնները, Մարինսկի և Տօրգօվի փողոցների անկիւնում, 20-ին, թնդանթներով ուռւակոծեցին Սաղաթէլեանի և հարկան տները, այն պատուակով, թէ իր պղտեղից կրակում էին զօրքերի վրա: Խուլիգանը ամբոխի դէմ դեռ ոչ մի արմատական միջոց ձեռք չեն առնւելու: Սպանւած հայեր հաշւում են քառասուն: Իրիւ-Ելբատում հրդեհ և սպանութիւններ են, տներում փակված նրստած ենք, չը կայ հաղորդակցութիւն»:

Հոկտեմբերի 23-ին, Սև քաղաքից.

«Ժամը 5-ին ուռւս և թուրք խուլիգաններից բաղկացած մի թափօր, ուղեկցութեամբ կօպակներ, հրդեհեցին Բալախանի և Ստանիսլավի փողոցների անկիւնը: Այրվում է ամբողջ կլարտալ. կան շատ սպանւածներ: Զը նայելով բնակիչներին ինդիքներ, իշխանութիւնները թոյլատրում են թափօրները. հայերը մեծ վտանգի մէջ են: Զօրք մասնակից է կողոպուտներին. երէկ, Նիկօլայեվսկի փողոցի վրա այրվեցին 13 հայ տներ. դիմեցէք Փոխարքային»:

Հոկտեմբերի 23

«Ներքող օրն է, որ խուլիգանները ըսպանում են, կողոպտում, հրդեհում հայոց տները, մաղաղիւնները. չը կայ օգնութիւն»:

Հոկտեմբերի 22-ին:

«Ռուս-թուրքական խուլիգանները Նիկօլայեվսկի փողոցում այրեցին Միրզաբէկեանի տունը. այրվեց մի ամբողջ կլարտալ. հրդեհաշէջները և վարչութիւնը չեն գործում: Սպանված են մի հայ քա-

հանայ և ուրիշ շատ անձներ։ Իրմեցեք ազգե-
ցութիւն ունեցող անձանց և օգնութիւն
խնդրեցեք»։

Բազուից, հոկտեմբերի 22-ին մեզ հեռա-
գրում են։

Երբորդ օրն է, որ թուրքերն և խու-
լիզանները միացած ուժով սկսել են ան-
կարգութիւններ անել։ Հայոց տները
ոմբակոծվում են, սպանութիւնները, կո-
ղոպտանքն և հրդեհումը շարունակ-
վում են։ Անյայտ կորել է մի քանիսն այ-
ժողովուրդը սարսափի մէջ է։ Աղաչում
են, անձամբ ներկայացնել Նորին Պաշա-
նափայտութիւն Փոխարքային և խնդրե-
ցեք շուտափայտ օգնութիւն, որովհետեւ
զօրքերը գործում են խուլիզանների
ցուցումներով։ Այդ բոլորի մասին թե-
մական առաջնորդ Անանիա եպիսկոպոսը
գեկուցել է Նորին Վեհափառութեան և
Նորին Պաշառափայտութիւն Փոխար-
քային։

Ստացանք հետեւեալ հեռագրերը. Բազու,
24 հոկտ. 9 ժ. 25 ր. առաւօտեան.

«Խուս և թուրք միացած խուլիզան-
ները 5-րդ օրն է կազակներ և զինուոր-
ների պաշտպանութեամբ սպանում, այ-
րում և կողոպտում են հայերին։ Այդպե-
ցին հայերի ամբողջ կլարտանքը։ Կո-
ղոպտված են մագազիններ և տներ։ Մեծ
թուով սպանված հայեր կան։ Իշխանու-
թիւնն անգործ է մնում։ Դրութիւնը կրի-
տիքական է։ Կան կենդանի այրվածներ»։

Բազու, 24 հոկտ. երեկոյան ժամը 4-ին.
«Ինչ ողջ ենք։ Դրութիւնը յուսահա-
տական է։ Անկարգութիւնները շարու-
նակվում են։ Չօրքերն անգործ են մնում»։

Հոկտեմբերի 24-ին, 5 ժամ 3 րոպէ երեկո-
յան.

Այսօր հանգիստ է։ Գեներալ-նահան-
գապետն ստաց հայերից, ռուսներից և
թուրքերից բազկապե՛ծ պատգամաւորու-
թեանը, որ նա այլ ևս թող չի տայ որ
և է մանիֆեստացիա անելու։ Երեք օր-
վայ ընթացքում զնամվել է հայերի մեծ
թիւ։

«Возрождение» թերթը տպել է հետեւեալ
հեռագրերը.

Պետերբուրգ, 22 հոկտեմբերի. Ե-
րէկ դադարեց քաղաքական գործադուլը։
Պաշտօնապէս երկաթուղիների շարժումը
բացված է։ Այսօր լրագրիները դուրս
եկան առանց ցենզուրայի։ Ողջունում են
նոր դարագլուխը և ազատութեան համար
մարանչողներին։ Վաղը թաղում են Բի-
բլիստերին և ուրիշ սպանվածներին։ Քա-
ղաքը սգաւոր կը լինի։ Վրաց համերկա-
ցիութիւնը հրաւիրում է քաղաքացիներին
յարգել նրա յիշատակը։ Տրամադրութիւ-
նը ոգևորիչ է։ Բանտարկան ներկայա-
ցուցիչներ թիւը Դուռայում 30 է։ Բնա-
կարանային ցնդը Դուռայի համար ա-
սում են նուազեցնում են մինչև 600
բուրլի։

Պետերբուրգ. Միւսիստների կա-
բինետը հետեւեալ կազմով է ենթադրվում.
Նախագահ և ֆինանսների մինիստր -
Վիտալ, ներքին գործերի - Ուրուսով,
լուսավորութեամբ - Կոնի, գրեւորական -
Բիցիլեյ, ծովային - Բիրկով, հաղոր-
դակցութեան ճանապարհների - Նեմե-
դաշկ, երկրագործութեան - Շիպով, ա-
ռւտրի - Լուկով։ Լրագրիները միաբե-
րան անցնում են ներգործական գործու-
նեցութեան և իրագործում են ամբողջա-
պէս ազատութիւնը։

Բազու. Անկարգութիւնները շարու-
նակվում են և սուկալի ծառայ են ըն-
դունում. կողոպտողները չեն խնայում
ոչ հայերին, ոչ ռուսներին. շատ տներ
այրված են, նրանց թուով թուամենանցի
և Չուբալովի տունը։

Շուշուց. հոկտեմբերի 14-ին, 10 ժամ
50 րոպէին կէսօրից յետոյ մեզ հեռագ-
րում են. «Գեներալ-նահանգապետի
հոկտեմբերի 6-ին մահնդականներին
տուած հրամանից յետոյ՝ չը ներգնան
հայերին, հոկտեմբերի 10-ին խանգէն-
վելըցիները քջեցին հալել երեսուն զը-
լուխ տաւար։ Իր ժամանակին յայտնված
է գաւառապետին. մինչև այժմ չը կան

ոչ գաւառապետը և ոչ պրիստաւը և ո-
չինչ միջոցներ ձեռք չեն առնվում։ Մեր
գրութիւնը կրիտիքական է։ Զիւանչիի
գաւառի Սարով գիւղի տանուտէրի
օգնական Մարգարով։

Շուշուց, հոկտեմբերի 16-ին, 12 ժ. 24 րո-
պէ կէսօրից յետոյ մեզ հեռագրում են.

«Եպիսկոպոսը հեռագիր ստացաւ գե-
ներալ Տակալզիլիից, որ վերացված է
էկզեկուցիան Դաւանու, Վանք, Խան-
բանդ գիւղերից։ Կարանաւորված են ու-
թը վանքիցներ, տասներկու գաւառ-
ւոցներ, քսան խանաբաղիներ, ա-
ռանց մերկացնող փաստերի, թուրք Շա-
ֆի-է-էֆէի և թուրք սարաֆիկների ցուց-
մունքով։ Գանակոծված են Ալլահ-
վէրդիէֆէ և Վէլիէֆէ Հասան-Ջա-
լալեանց ազնուականները և շատ գիւ-
ղացիներ։ Մահաւանդ աչքի էր ընկնում
իր եղանգով լիւրջիւնեան գնդի սօտէնի
հրամանատարը այն ժամանակ, երբ Վոլո-
սկի գնդի սօտէնին հրամանատար Գոլու-
բինսկի, կանգնած լինելով իր կոշման
բարձրութեան վրա, արգելում էր ամեն
տեսակ անկարգութիւններ։ Չորրորդ օրն
է, որ 110 կողակներ, պրիստաւի և չորս
թուրք սարաֆիկների առաջնորդութեամբ
գաղանթութիւններ են անում Կիլիշբար
գիւղում։ Էկզեկուցիային առիթ տուին
երկու գնդակներ, որ արձակվել են մը-
թութեան մէջ ձիաւորների վրա, որոնց
պահապանն ընդունել է թուրք կողոպտիչ-
ների տեղ։ Հայերին զինաթափ են ա-
նում, ձեռքն ինկած ամեն ինչ ոչնչաց-
նում են, իրանք կազակները վերցնում
են իրանց համար թանգապէս իրերը խու-
զարկութեան պատրուակով, անպատում
են կանանց և աղջիկներին։ Սաստիկ գա-
նակոծված և կարանաւորված են Մուքէ Ար-
գունանեանը և պահապան Գաբրիէլ Դա-
լեան երկու բերդակալի փամբուշտի
և մի բերդակալ ունենալու համար, որ
տուել էր նրանց հասարակութիւնը։ Բնա-
կիչները անարեկութեան են ենթարկված,
առանձնապէս թուրք սարաֆիկների կող-
մից։

Շուշու, 22 հոկտեմբերի.

«Աղաչում ենք գեկուցանել գեներալ
Շիրինկինին Շուշու և գաւառների հա-
յերի սատարի անելանելի վիճակի մասին.
սպանութիւնները և կողոպտումներն ըն-
դունել են քրօնիքական բնաւորութիւն։
Հոկտեմբերի 16-ին հայերի բոլորովին
կորելիս վարմունքին չը նայած, Շու-
շում, քաղաքի մօտ գաղանթներ սպանվել
են երեք անգին շուշուցի հայեր, նաեւ եր-
կու երեխայ և մէկը վիրաւորված։ Գա-
ւառներից ստացվում են ամեն ժամ տե-
ղեկութիւններ թուրքերի կողմից եղած
յարձակումների, տաւարի յարկաւորու-
թեան, հրդեհների և սպանութիւնների
մասին։ Խաղաղ ազգաբնակիչները վեր-
դրված է վարչութեան անարդար վար-
մունքից, որ ուղղում է միջոցները գրեթէ
բացառապէս հայերի դէմ, որոնց բնա-
ւորակում են խմբովին, էկզեկուցիա են
դնում հայերի դէմ, կողոպտում են կի-
սաքացած ժողովրդին։ Սյապէս սարքի
չէ կարելի։ Օգնեցե՛ք, ով ունի կարեկ-
ցութիւն գէթ մի կաթիլ»։

Ամբրումեան, Բաւթրեան, Իւզաշեան, Բա-
լանթրեան, Փիրումեան, Ներեսեան, Հարու-
նեան, Չորաբեան, Մէլի-Կարագեօղեան,
Ջանումեան։

Գորիսից, հոկտեմբերի 19-ից մեզ հեռա-
գրում են.

«Հոկտեմբերի 14-ին Գորիս ճանա-
պարհ ընկաւ գեներալ-նահանգապետ Տա-
կալզիլիի, որին հանդիսաւոր կերպով դի-
մաւորեց քաղաքի սահմաններում հայ
և թուրք ազգաբնակիչները, հայ
հոգեւորականութեան առաջնորդութեամբ։
Հայերի պատգամաւոր Տէր-Գրիգորեանց
արտասանեց մի ողջոյնի գեղեցիկ ճառ,
որը աւարտեց հայ ազգաբնակիչութեան
կողմից միշտ արտասանվող խօսքերով.
«Թող կտրուկ լինի Ռուսաստանի զօրեղ
թագաւորին, ամբողջ հայ ժողովրդի հո-
վանաւորի սուրբ»։ Գեներալ-նահանգա-
պետի չքամբումն է գտնվում ամբողջ
Լաւրաքաղում յայտնի պրիստաւի օգնա-
կան Իսկանդար Բէկը, որը հնազանդ ազ-

գեցութիւն է վայելում Զանգեզուրի գա-
ւառում։ Հոկտեմբերի 15-ին, բոլոր պաշ-
տօնեաների պաշտօնական ընդունելու-
թիւն կատարելուց յետոյ հրապարակի
վրա, գեներալ-նահանգապետը համարեա
չորս ժամ շարունակ ընդունում էր գան-
գատաւորներին, որոնց խում էր գար-
մանալի ուշադրութեամբ։ Գեներալ-նա-
հանգապետի այդպիսի տաք, անկեղծ և
կատարեալ օրէնկալի և անկողմնապահ
վերաբերմունքը դէպի կողոպտված բնա-
կիչների և ամբողջ տեղական ազգաբնա-
կութեան կարիքները առանց ազգութեան
խտրութեան՝ բոլորի վրա գեղեցիկ տպա-
ւորութիւն է թողնում։ Այսօր, հոկտեմ-
բերի 17-ին, նորին գեներալ-նահանգա-
պետը ընկաւ ընկնում Տանգաւէրը, յետ
գաւառայի կը մանի հին հայկական Տա-
թիւ վանքը։ Գեներալ-նահանգապետը ճա-
նապարհ ընկաւ գաւառը՝ հաստատ դի-
տաւորութիւն ունենալով հաստատել հա-
յերի և թուրքերի միջև ամուր խաղաղու-
թիւն։ Գեներալը կը վերադառնայ Գորիս
երեւի հոկտեմբերի 20-ին։ Գաւառի հայ
ազգաբնակչութեան ներկայացուցիչներ
Տէր-Գրիգորեանց, Պարունով, Մալիցեան,
Լաւրեան, Մէլի-Շահնազարեան։

Գորիսից մեզ հեռագրում են հոկտեմբերի
15-ին հետեւեալ.

«Այսօր գեներալ-նահանգապետ Տա-
կալզիլիի այցելեց պրափօսպեանի և հայոց
կեղեցիները, ուր մաղթանքներ կատար-
վեցին։ Գեներալ-նահանգապետն ընդուն-
եց Գորիսի և կողոպտված ու այրված
Միքէնդ, Սոֆաւար, Ջէյլա, Գորար,
Ալիդուլիէնդ գիւղերի ներկայացուցիչ-
ներին և յայտնեց իր հաստատ որոշումը՝
անպայման վերջ դնել հայ-թուրքական
ընդհարումներին։ Գեներալը հրաւիրեց
գաւառի ամբողջ ազգաբնակչութեանը՝ շա-
րունակել իր խաղաղ կեանքը, ասաց, որ
հայերը իրանց աշխատասիրութեամբ և
կուլտուրականութեամբ վաղուց յայտնի
են կառավարութեանը և այդ պատճառով
նա կը պաշտպանէ իւրաքանչիւր հայի
կեանքը և գոյքը, որպէս իր սեփականը,
մասնաւորապէս որ Զանգեզուում թուրքերն
էին, որ առաջին յարձակումը գործեցին
Միքէնդի վրա։ Թուրքերը խոստովանում
են իրանց մեղքը, խոստանում են վերա-
դառնալ բոլոր կողոպտուոր, որի համար
կը հիմնվեն յանձնաժողովներ։ Այդտեղ
գեներալը հրամայեց իր զեւանստան
զլխաւորին հեռագրել Գանձակ՝ որպէս զի
անյապաղ կարանաւորեն Միքէնդը քան-
դող և նրա կողորածի պատճառ եղող
նախկին պրիստաւ Սաբրը-է-էֆէին, նոյն-
պէս հրամայեց բռնել այն բոլոր թուր-
քերին, որոնք կասկածվում են խմբական
յարձակումների, սպանութիւնների, կո-
ղոպտումների մէջ։ Այստեղ և Դիգէնում
բռնված են 34 հայեր։ Վաղը գնում է
Տաթիւ։

Նախիջևանի գաւառից եկող լուրերը
նորից սկսել են չարադուշակ լինել։ Ան-
կասկած, պէտք է անձնատուր չը լինել ա-
ւաւերդը անհանգստութեան և անհրա-
ժեշտ է ստուգել իրականութեան փաս-
տերը, բաժանելով պատահականը հակա-
նից։ Բայց և այդպէս պարտաւոր ենք
զգուշ մեզ արձանագրելու, որ մկուս
են կրկնվել անախորժ խլրատումներ և նոյն
խկ սպանութեան դէպքեր։ Եւ անուշտ,
եթէ առաջին իսկ փորձերը հաւածանքի
չենթարկվեն, չարադուշակները չը զսպվեն
և չը պատժեն, այն ժամանակ մենք նո-
րից ապանտես կը լինենք դժոխսի ու-
րերի, որոնք այնքան սև յիշատակներ թո-
ղին Նախիջևանի և Շաքուրի շրջանում։

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացված
Վլադիկավկազից, որ ներկայ հոկտեմբերի
10-ին պահեստի անցնող զինւորները
կողոպտեցին Գրոգորի բազարում, չէ-
չէններ մի քանի խանութներ, որի ժա-
մանակ մի քանի մարդիկ վիրաւորված
են։ Այդ հանգամանքը կարող է լուրջ
բարդութիւն կարուցանել ամբողջ չէչէն
ժողովրդի կողմից. զօրքերը իւր թէ քիչ
են և բաւարար չեն կէտերը պաշտպա-
նելու համար։ Գրոգորի նախահանգերում
սարսափ է տիրում բանտներին մէջ։

Նախ քաղերը կարող է կանգ առնել։
Դա քաղաքական բնաւորութիւն չունի։

Գանձակի գաւառի այն մասը, ուր
գտնվում են Թալիշ, Սարով, Հա-
սանդաւա, Խօյուղու գիւղերը շրջապատ-
ված են թուրք յարձակողներով մասնաւոր
խմբերով և կտրված են հաղորդակցու-
թիւնից դուրի աշխարհի հետ։

Մի քանի անձներ, որոնց աղողվել է անց-
նել այդ օղակի միջով, շատ ծանր դը-
րութեան մէջ են նկատագրում հայ գիւ-
ղերի դրութիւնը։ Թէ և գիւղերում կան
կամաւոր պահապաններ, որոնք հսկում են
գիւղի ապահովութեան վրա և դիմադրում
են յարձակումներին, բայց նրանք անկա-
րող կը հանդիսանան յետ մղել բազմա-
մարդ հրօսակների կազմակերպված մեծ
արշաւանքները։ Իսկ մեր ստացած լուրերը
ցոյց են տալիս, որ թուրքական յարձա-
կումներին մասնակցում են շրջակայ թուրք
գիւղերից բազմաթիւ զինված մարդիկ
հեծեալ և հետեակ։

Մենք յայտնելով ներկայ տխուր իրա-
կանութեան մասին, ամենաին չենք դար-
մանում որ նա տեղի ունի և ամենաին
անսպասելի չենք գտնում նրան։

Ընդհակառակը, մենք վաղուց ընդգծել
էինք և մի քանի անգամ կրկնեցինք, որ
յիշված շրջանը վտանգաւոր վիճակի մէջ
է գտնվում և որ նա կարող է ենթակայ
գաւառի աւերի և կոտորածի։

Բայց լուր չը կայ։ Ազգաբնակչութիւնը
գիմել էր գաւառապետին խնդրելով որ
աշակցութիւն ցոյց տրվի մի քանի գիւ-
ղերի տեղափոխվելու ժամանակաւորապէս
ապահով հայ գիւղեր. բայց նա այդ խն-
դրերը գտած անհիմն, առաջացած սխալ
վրդովմունքից և յամենայն դէպս շատ
վաղաժամ գիւղացիները խնդրեցին զօրք,
բայց անկարելի եղաւ. զօրքի մի մասը
ուղարկել այդտեղ։

Ինչ վերաբերում էր գեներալ Տակալ-
զիլիւն, նա շարունակում էր հեռագրի-
ներ ուղարկել Թիֆլիս, թէ շրջող լուրերը
չափազանցած են, կամ արգելիք են երկ-
չոտ երեւակայութեան։

Ինչ կարելի էր անել գիւղացիները
արին իրանց կողմից։ Տեղական ժողովուրդի
կողմից անդադար լինում էին դիմումներ
թէ Գանձակ և թէ Թիֆլիս, բայց չա-
րերը չը հեռացվում և նա թագաւորում է
դժբաղդ գիւղերի շրջանում։

ՆՈՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱՆՈՐՈՒԹԻՒՆՔ ՓՈՆԱՐԿԱՅԻ
ՄՕՏ

Երկուշաբթի օր, հոկտեմբերի 24-ին երեկո-
յան ժամը 5-ին, Թիֆլիսի հայ ազգաբնակչու-
թեան կողմից կազմված մի պատգամաւորու-
թիւն, մօտ 30 հոգի, գլուխ ունենալով Թիֆլիսի
թեմի առաջնորդ Գաբրիէլ արքեպիսկոպոս
Սաթունեանին, ներկայացաւ կողկապետ Գո-
խաբեյ կոմս Վօրոնցով-Դաշկովին նրա պա-
շտուած Հոգեւորականներից մասնակցում էին
նաեւ Թիֆլիսում գտնվող Նահապետ եպիսկո-
պոսը և Եփրեմ ու Կոնստան վարդապետները։
Կոմս Վօրոնցով-Դաշկովը ընդունեց պատ-
գամաւորութիւնը՝ պալատի ընդունարանում
Թիֆլիսի առաջնորդը, ներկայացնելով պատ-
գամաւորութիւնը յայտնեց, որ նա այսօր ա-
ռաջին անգամ է հնարաւորութիւն ստացել
Թիֆլիսի հասարակութեան ընտրել մասի
հետ գալու կոմսի մօտ յայտնելու հայերի ու-
րախութիւնը կայսերական Մանիֆեստի առի-
թով։ Այն մաղթանքին, որ նշանակված էր
Մանիֆեստի առիթով, Վանքի մայր եկեղե-
ցում խմբված էր չը տեսնված մեծ բազմու-
թիւն, բայց կազմել պատգամաւորութիւն այդ
և հետեւեալ օրերը անհնարին էր։ Այսօր, ներ-
կայանալով հայ պատգամաւորութեան հետ,
պալատի ունեւ նախ յայտնելու հայ ժողովուրդի
անհուն շնորհակալութիւնը և անկեղծ ուրա-
խութիւնը այն շնորհների համար, որ տուել է
Ռուսաստանի ժողովուրդներին Նորին Բարձ-
րութիւն հայաթ-Թագաւորը և ապա խնդրելու
որ դուր, Չորք պաշառափայտութիւն միջնորդ
հանդիսանաք արկանելու առ ոտս Թագաւոր-
հայրի մեր երախտագիտութեան ջերմ զգաց-
մունքները։ Մի և նոյն ժամանակ կարեւոր եմ
համարում յայտնել, որ իմ թեմի բոլոր մա-
սերին ծանուցել եմ տեղի ունեցած շնորհի
մասին և առաջարկել եմ ամեն տեղ գոհացու-
ղական մաղթանքներ կատարել։

